ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

24.08.2021թ. թվականին կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/97-2 գնման պայմանագրի

ք. Երևան «27» 10 2021թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ՝ Գ. Ավետիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ-ը, ի դեմս տնօրեն Ս. Բալասյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 24.08.2021թ. կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/97-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1. Պայմանագրի շրջանակներում 25.09.2021թ. կնքված N 1 համաձայնագրի Հավելված 1-ով 5-րդ և 17-րդ չափաբաժինների մասով սահմանված մատակարարման ժամկետները խմբագրել և ներկայացնել հետևյալ շարադասությամբ՝ «25.09.2021թ. կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում՝ ըստ Պատվիրատուի պահանջի»:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100
ՀՎՀՀ 00000911

տնօրենի ժ/պ -----------------Գ. Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Երզնկյան Փ./Տ/27 Արաբկիր
«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11813018899800
ՀՎՀՀ 20161762

տնօրեն -----------------Ս. Բալասյան
/ստորագրություն/
Կ.Տ